

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԻՇՏԱԿԱՐԱՆ

Ա.Մ.Աթայան

Սիրում եմ հին արժեքները և նրանցից մեծագույնը՝ հայ լեզուն:
Սիրում եմ մեր ժողովրդի հնագույն սովորությունները, ստեղծված բախտավոր
ժամանակներում, եթերային սիրով ջրդեղված
իրենց ակունքներով մաքուր, մաքուր, բոլորի կողմից ընդունված ու սիրելի...
Լ. Հարությունյան, «Գրառումներ ծոցատնտրից»

Հայ բանագիտությունը հարուստ ավանդույթներ ունի: Բազմաթիվ են բանահյուսության, բանահավաքչական, ազգագրական ուսումնասիրություններն ու հետազոտությունները: Այնուամենայնիվ, անսպառ է ժողովրդական նյութերի գանձարանը, որ դեռևս շատ դիտարկումներ ունի ժողովրդական բանահյուսության ազգային առանձնահատկությունների, միջազգային գոյահեռների, պատմականության, ժանրային ու ոճական արժեքների խորքային հետազոտության համար:

Արցախի ժողովրդի դարավոր իմաստությունը մատնանշող մի յուրօրինակ գանձարան-հանրագիտարան է Լևոն Հարությունյանի բանահավաքչական, բանասիրական, ազգագրական անուրանալի վաստակը՝ ամփոփված «Նշխարներին» չորս ժողովածուներում ու դեռևս անտիպ՝ հինգերորդ գրքում:

Սրտի անհուն բերկրանքով են թերթում չորրորդ գիրքը, սրբազան երկյուղածությամբ, որը նաև ոգեղեն գաղթոն է, սարսաղոտ ծնրադրություն, որ կկատարվի սրբազան խորանի ներսում՝ երկնային հնչյունների ձայնակցությամբ: Իսկ խորանից դուրս ես գալիս թեթևացած հոգով, իմաստնացած:

Ծանոթ լինելով Լ. Հարությունյանի նախորդ ժողովածուներին՝ վստահությամբ կարող ենք ասել, որ ստեղծված գիրքը շարունակություն է, որը, զգացվում է, վերջ չունի: Եվ լավ է, որ չունի, որովհետև որքան էլ փոխվում են ժամանակները, փոխվում են արվեստի գնահատման չափանիշները, կյանքը պահանջում է արժեքների նոր մեկնաբանություն, եղած տեսակետների վերանայում... Որ կողմից էլ դիտելու լինենք Լ. Հարությունյանի վաստակը, մտավախություն չկա, որ արած-թողածը երբևէ կհանա, կամ ինչ-որ բան ժամանակավրեպ կլինի: Ամեն ինչ այստեղ էլ նորովի է, կյանքոտ, մարդկայնորեն գեղեցիկ, տարիների փորձի հետ շաղախված, հազար անգամ չափած-ձևած, հազար անգամ ստուգված:

Լ. Հարությունյանի աշխարհը բազմաթիվ է ու բազմաշերտ, քանի որ նրա ընտրած ոլորտը ներառում է հայ ժողովրդի հոգևոր սնունդը՝ ժողովրդի բանահյուսությունը, որն ազգի համար գոյության երաշխիք է, պատմություն, կենսագրություն, գոյատևման գրավական, արվեստ ու հրաշագեղ կոթող: «Իմաստությունը խտացած կենսափորձ է, կենսափորձը՝ խտացած իմաստություն», - գրում է հեղինակը¹: Հիրավի, իմաստուն կենսափորձի արդյունք են թե՛ Արցախի բանահյուսությունը, թե՛ հեղինակային գրառումները:

Ժողովածուի առաջին և կարևոր առանձնահատկությունն այն է, որ Լ. Հարությունյանը կարծես թե աննկատ ու անադմուկ մտնում է բանահյուսության աշխարհը՝ առանց մեծադորդ հավաստիացումների, որպես մի համեստ, բայց խոհուն ու պայծառամիտ բանասեր, սակայն տքնության, երկարատև տքնության, ծանրությամբ անելու սովորությամբ յուրաքանչյուր պատումի մեջ զգացվում է, որից էլ գիրքը վերածվում է յուրօրինակ գիտահետազոտական աշխատանքի, ուր կենտրոնում առատ քննական նյութի հետ շաղկապվում են բանահավաք-ազգագրագետի հստակ միտքն ու բանասիրական իմաստությունները:

Առաջին ժողովածուներում Լ. Հարությունյանը մեծ պատասխանատվությամբ ու բանասերի լրջությամբ բնութագրում է իր արած-թողածը, որի հիմքը Արցախի բնաշխարհի, հավատալիքների, ժողովրդի կենցաղի ու բարքերի, նրա դարավոր պայքարի, արցախցու առնչքնոց հատկանիշների, հյուրամեծարության, անկաշառ մարդասիրության, հոգեկան բարձր նկարագրի վերհանումն է: Գործ, որ կատարված է անհուն սիրով ու սիրահարվածությամբ,

ժողովրդի մարդու՝ պաշտամունքի հասնող մեծարանքով: «Առհասարակ, մեր սովորույթները բախտավոր ժամանակների ծնունդ են՝ դարերի մեջ ամրակայված ու սրբացած, եթերային սիրով ջրդեղված, իրենց ակունքներով մաքուր ու ժողովրդական, բոլորի կողմից ընդունված ու սիրելի»,- գրում է Լ. Հարությունյանը² :

Նոր՝ չորրորդ ժողովածուն առանձին բաժիններ չունի, սակայն յուրաքանչյուր վերնագիր իմաստության դաս է, որովհետև այն ժողովրդի պատմությունն է՝ անհիշելի ժամանակներից առաջօր, նրա խոհերն է, զգացումները, ազգային միասնության երազանքը, խաղաղ ու ազատ ապրելու ձգտումները:

Նախորդ ժողովածուներում հեղինակի կողմից բանահյուսական ժանրերի քննություն այստեղ չենք տեսնում, որովհետև հեղինակի նպատակն է համարել նախորդ նյութերը, որոնց տեսությունն արդեն մասնակիորեն ակնհայտ է: Չթաքցնենք, այստեղ կարծես գերխտանում են ընդհանրացումները, և հեղինակն ավելի շատ շեշտը դնում է ժողովրդի պատմության, քաղաքական կյանքի ճակատագրական պահերի ու երևույթների վրա, որոնք ակնհայտ են ժողովրդական բանահյուսության ստեղծման բոլոր փուլերում էլ: Հայ ժողովրդի Արցախի հատվածի պատմությունը ևս լի է օտար նվաճողների ասպատակությունների օրինակներով: Այս երևույթն իր արտացոլումն է գտել ժողովրդական բանահյուսության գրեթե բոլոր հիմնական ժանրերում: Հիշտ է նկատում հեղինակը. «Ժողովրդական բանահյուսությունը անխաթար կերպով պահպանում է այն ամեն լավը, որ որպես հիմնաքար պետք է ծառայի ազգային ներկա և ապագա տան կառույցը պատահական ակնկալիք ու անակնկալ հողմերից անվթար պահելու համար: Խնդիր ու ողջամիտ են մեզ ավանդված հերիաթները, գրույցները, ավանդությունները, առածները, ասացվածքները, դարձվածքները... Նրանք նաև լեռնային աղբյուրների պես մաքուր են, թափանցիկ ու պարզ, բազմաբնույթ ու բազմախոս, և ուր արտացոլված են պատմականորեն արված մեր հաստատուն ու անշեղ քայլերը, նաև վրիպումները, սայթաքումները, խտրումները, բացթողումները: Ժողովրդական բանահյուսությունը ստեղծվում է դարերի ընթացքում և ընթանում ժողովրդի հետ համաքայլ՝ շարունակ կրկնելով, շարունակ հիշեցնելով, նպատակ ունենալով մաքուր ու անպարտ պահելու նրա ոգին, լավը, շիտակը կրկնելու, սխալը, անիրավն ու վնասակարը հեռու վանելու հանապազ առաքինությամբ»³ :

Լ. Հարությունյանը քաղաքականապես հասուն մտավայրությամբ է քննում օտար նվաճողի վարքագիծը, մեր ժողովրդի քաղաքական կարճատեսությունը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ աշխարհավարական տգիտություն՝ հավասարազոր ազգադավության: Դրանից պետք է դասեր քաղել, որովհետև դարեր շարունակ բազմացան նրանք՝ շարունակ վերագայող ազգականներով, զինակիցներով, հավատակիցներով, թոռներով, ծոռներով, որոնց առգրավելու հարածուն ավարժակր, թալանչիական, ավագակային բնույթը պատմականցին ողջ հայ ժողովրդի լինելությունը՝ որպես արնածոր յաթաղան կախվելով նրա աշխարհաշեն ճանապարհին: Լ. Հարությունյանը բերում է մի տիպական օրինակ, որը ժողովուրդն է ներկայացրել և որը արյունոտ դեր է խաղացել նրա ճակատագրում: «Գառներն ու դեր» գրույցը պատմում է այն մասին, թե ինչպես է դեր, չարաշահելով գառների վստահությունը, աստիճանաբար ձեռքը, ոտքը, գլուխը, մարմինը ներս սողոսկում, ու... դևի երախին կուլ են գնում ամբողջ գառները, ճխլվում նրա սմբակների տակ... ու դեր տաքուկ տան տեր է դառնում:

Այլաբանական այս գրույցը խորհրդանշում է դարաբաղյան ասացվածքը. «Սրտիդ նստեմ, մրորդ քանդիմ» կամ «Վրնանաս տեղ անիմ, տեղդ նեղ անիմ», կամ «Թորքեն վեր տոն տարեր՝ հարթնանն աշկեն կյեշի, տանը գյեին, կյումեն ծիին» և այլն: «Թշնամուն տուն թողնելը, առավել՝ տուն հրավիրելը անհամատեղելի է հետագա գոյության հետ, աղետալի՝ տան ճակատագրի համար»,- գրում է Լ. Հարությունյանը: Ու շարունակվում են դասերը, ժողովրդի իմաստուն խելքն ու խրատը: Իրոք, եղերական դեպքերը կրկնվեցին նաև նոր ժամանակներում, որովհետև... պատմությունից դասեր չառանք, ու Ավդալն ու Գյուլափիլուն առանց աղմուկի տեղ գրավեցին Ավդուռի, Մյուրիշենի, Հացու, Նորշենի տարածքների վրա, Կուրոպատկինոն ու Մալականը բնավորվեցին թուրքերով, Խոնաշենի և Թաղերի արգավանդ հողերի վրա, Ղաջարը արմատ ձգեց Մաճկալաշենի և մյուս գյուղերի հարևանությամբ, Խոջավանդը կամաց-կամաց խաբիսխ ձգեց Խոնաշենում (Մարտունի), Ղարադաղվի մի քանի օբան «երմանիմ արեց» Աշանի և Կաղարծու, Քերթի հողերն ու անտառները, որ որպես «փեշքեշ» տրվեցին մեկ-երկու «մեծահոգի» մարդկանց կողմից...⁴ :

Լ. Հարությունյանը ցավում է, որ բացակայում է ազգային հավաքական մտածողությունը, որի համար հիմքեր կային: Սրտացավ հեղինակը խոր ցավ է ապրում հայերի տեղահանության, պանդխտության համար, որոնց մասին պատմում են բանահյուսական կտորները:

Այն համոզմունքով, որ ժողովրդական բանահյուսությունն ինքնին ազգագրություն է, ժողովածուում բանահյուսական ու ազգագրական նյութերը զետեղված են գիրկընդխառն:

Հետաքրքիրն այն է, որ հեղինակը երբեք չի հորինում, բանասացի ազնվությամբ է գրում այն, ինչ գիտե, ինչու՞մ ինքը վստահ է: Եթե ստեղծագործում է, ուրեմն վստահ է, որ ասացողները երգի, առածի, ասացվածքի, հանելուկի ոչ թե պասիվ վերարտադրողներ են, այլ նրանց ստեղծման ու ձևավորման պրոցեսի շարունակողները, ուրեմն և, հեղինակակիցներ: Ահա թե ինչու Լ. Հարությունյանը շատ նմուշներում հեղինակակից է և եթե որոշ փոփոխություններ էլ մտցնում է, ապա միայն հարազատ մնալով ստեղծագործության թե՛ ոգուն, թե՛ պատմականությանը: Ամեն մի հորինող էլ կարող է ստեղծագործությունից դուրս թողնել որոշակի անկատար արտահայտություններ, լեզվաոճական անհարթություններ, էթիկապես ժողովրդի մտածողությանն անհարիր երևույթներ: Եթե բանահավաքը անտեսի այս ամենը, ապա հնարավոր է, որ ժամանակի ընթացքում լավ պատմվածք, լավ արժեքն աղավաղվեր ու սերունդներին հասներ կնճռտված ու խաթարված տեսքով: Բանահյուսությունն, ուրեմն, դարերի ընթացքում հղկվում է՝ ինչպես Բակունցի կերտած Մինա բիբու գորգը, որն ինչքան լվացվում, այնքան գույները պայծառանում են:

«Բանահյուսության՝ իբրև կոլեկտիվ ստեղծագործության առանձնահատկությունն արտահայտվում է ինչպես նրա հեղինակների աշխարհայացքի ու ըմբռնումների նույնության, այնպես էլ նրա հյուսվածքների կոլեկտիվ մշակման գաղափարական-գեղարվեստական կատարելության մեջ»,- կարդում ենք Գր. Գրիգորյանի «Հայ ժողովրդական բանահյուսություն» գրքում⁵:

Լ. Հարությունյանի «Նշխարների» արժեքը նրա ինքնուրույն մշակման, ճշմարտացի հիմքի ու դրանք մահվան վտանգից ազատ ու անխաթար պահելու մեջ է: Նրա պատումները սոսկ քանակ չեն, այլ նաև որակ, որովհետև դրանից հղկվում ու կայունանում է բանահյուսական արժեքը:

Ժողովածուում ապահովված է ներքին պայմանականությունը, որը հուշում է բանահավաքի մտահորիզոնի, ժամանակների ընկալման, բարքերի, սովորույթների իմացության մասին:

Գրքում հրաշալի է զգացվում բանահյուսության ու գրականության փոխադարձ կապն ու ներգործությունը:

Մ. Գրեկին «Գրական-հրապարակախոսական հոդվածներ»-ում գրել է. «Ժողովրդի բանավոր ստեղծագործությունը անընդհատ ու որոշակի ազդել է գրավոր գրականության այնպիսի խոշորագույն երկերի ստեղծման վրա, ինչպիսիք են, օրինակ, «Ֆաուստը», «Բարոն Մյունխհաուզենի արկածները», «Գարգանտյուա և Պանտագրուելը» և շատ ուրիշները»⁶:

Բանահյուսությունը միշտ էլ եղել է գրականության հողն ու զինարանը: Գաղտնիք չէ, որ բանահյուսական հիմքի վրա են աճել համաշխարհային գրականության գլուխգործոցները: Լ. Հարությունյանը յուրօրինակ նպատակայնությամբ բանահյուսական տարրը զուգակցում է բանաստեղծական կամ էլ պրոզայի որևէ պատումի հետ: Ժողովրդական դարձվածքները, առած-ասացվածքները արժևորում է, համեմատում որևէ կտորով: Այսպես՝ «Գառներն ու դևը», «Գաղթ», «տարագնացություն», «Ա՜յ, այն արևի նման» պատումներում ընդհանրացումը կատարվում է ժողովրդի հոգուն ու սրտին հարազատ արտահայտություններով. «Քամին տանտեր դարձավ, տանտերը դարձավ քամի», «Սրտեղ նստեմ, մրորդ քանդիմ», «Վե՛նանս տեղ անիմ, տեղդ նեղ անիմ», «Թորքեն վեր տոն տարեր՝ հարթանն աշկեն կյեշի, տանը գյաբին, կումեն ծիին» և այլն... կամ էլ՝

Երանի ձեզ, թխպոտ սարեր,
Կռանում չըք, պռավում չըք,
Ուրուր անա ծերք չըք քաշում,
Ուրուր անա հեռանում չըք:⁷

Բազմաթիվ են հեղինակի մտահոգությունները ազգային հին ու նոր ճակատագրերի հանդեպ: Ժողովուրդը միշտ ճակատագրի բերումով գտնվել է քաղաքական կյանքի տարաբերումներում՝ միշտ էլ հայացքը հառած որևէ տեղից ճառագող լույսին: «Բանահյուսությունը ժողովրդի կենսագրությունն է, նրա արմատական հիշողությունը»,- միանգամայն ճիշտ է հեղինակը: Ճիշտ է նաև ժողովուրդը՝ «Գրական պեց չթողնել»: Ժողովրդական իմաստության բացատրությունը հայրենասեր հեղինակի հոգու ցավն է, պայքարը շարունակելու մեջ հեռատես ու խելոք լինելու քարոզ: Ղարաբաղի շուրջը տարվող բանակցությունները պետք է տարվեն առանց դույզն-ինչ սխալվելու, հետևողական և խելամոռեն: Պետք է բացառվեն թուլանալու, ձանձրանալու, շտապողականության, գործը հաջորդիվ թողնելու, ասել է թե՛ վճռական պահը

թերագնահատելու միտումները՝ ազգային մեծ խնդիրներ լուծելու գործընթացում: «Պահը ճակատագիր է» վերնագրի տակ հեղինակը «գրավան պեց թողել» արտահայտությունը մեկնաբանում է քաղաքագետի, իր ժողովրդի ճակատագրի համար տառապողի հայացքով:

«Մեթոդական իմաստությունները հուշում են, որ ճակատագրական բոլոր հարցերում հաղթել է հայ ժողովրդի միասնական կամքի պողպատյա կարծրությունը»: Լ. Հարությունյանը բերում է խոնաշենցի բանասացի տողերը.

«Էն ա խելք օնիք՝ ջամ անելն ա մնամ,

փոնջ եք անըմ՝ կամ անելն ա մնամ:

Ա հայեր, ընգոճներես օղ ըրեք,

Արև ընի թա՝ կարկուտ՝

Ուրուր անա պենդ փռնեցեք»⁸:

Տեսածով է իմաստնացել ժողովուրդը: Այս տեսանկյունով է Լ. Հարությունյանը գրի առել «քաղաքագետ ու արդարամիտ ժողովրդի խրատաբանքը», որտեղ ներկում է հայի բարությունը, սերության գովքը, հայրենասիրությունը, ժողովրդասիրությունը, նաև՝ պարզամտությունը (ամառվա այգաբացի նման խաղաղվում է հայը՝ հավատալով թուրքին անգամ, որը փոս էր փորել հենց հայի համար):

Մեծ է գրքի դաստիարակչական արժեքը: «Ի՞նչ դեղատոմսեր է առաջարկում ժողովրդական բանահյուսությունը ազգային ցավերը դարմանելու համար» բաժնում հեղինակի նպատակն է «հայաշխահիկ ավանդույթներով դաստիարակել հայ երեխային. մոր կաթը դարձնել հայրենասիրական բալասան, իսկ բանահյուսությունը պետք է «մեր հավատի զանգի պես ծնգա մեր սերունդների ականջների մեջ: Հայրենասիրություն: Ահա այն կրակը, որ ի գորտ է մշտաբորբոք վիճակում պահել գոյատևման քուրան՝ պապենական հողի վրա, ո՛չ մի այլ տեղ: Այնտեղ, ուր մեր հարազատների գերեզմաններն են, շեն աղբյուրները, անկրկնելի պտղաշխարհը, խաղողը, գինին, վաղնջական ավանդույթներով հարուստ բնությունը և մեր իմաստուն հավաքականությունը»⁹:

Բազմաթիվ բանահյուսական գրույցներով հեղինակը բացահայտում է. «Հայը պետք է գոյատևի զենքով, արարելով, գրով ու լեզվով, ամենագոր գիտությամբ, ամենախոս արվեստով, իր աստվածային սովորություններով, սիրով ու միաբանությամբ և իրեն ներհատուկ բարեմասնությամբ ու նվիրվածությամբ բոլոր ժողովուրդների հետ: Անցնելիք բովանդակ ճանապարհին, չմոռանալով, որ մեղր արարողը նաև խայթել պետք է իմանա, թեկուզ իր կյանքը կորցնելու գնով»¹⁰:

Յուրաքանչյուր փոքրիկ գրույցի մեջ խոսում է իմաստուն այրը, որը կենսափորձի հարստությամբ, բազմախորհուրդ կեցվածքով մեզ է պարզում Արցախի բանահյուսության՝ մեզ ավանդած խորհուրդներն ու պատգամները: Այդ են վկայում «Հայի 5 մատները», «Երկու ուղևոր», «Հային ետև խելքը» և այլ գրույցները:

Լ. Հարությունյան-բանագետի պրպտուն միտքը պնդում է մեր հինավուրց հիշատակարանները, զանազան ասացողների (վաղեմի և այսօրվա) հուշամատյանները և իր իմաստուն խոսքն ասում Արցախի հավատալիքների, կենցաղի, սովորույթների մասին:

Գրքի «Տեղանուններ» վերնագրի տակ հեղինակը ստուգաբանորեն բացատրում է Վարանդա, Մուղան, Ղարաղշլաղ, Կանաչ Թալա, Արքևան, Յիգ Քարեր, Կուտ, Կուտի, Խութին Նահատակ, Մաթեգ-Մաթիկ, Պռաթումբ-Պառաթումբ, Բուռուն, Հաղորտի, Խաթունարխ, Բուռ և այլ անուններ: Ստուգաբանորեն տալով բառերի ծագումը՝ հեղինակը տեղանունը բացատրում է որպես պատմական վկայություն, պատմություն, իր դարերի խորհուրդը ներառող հուշարձան: «Եթե նկատի ունենանք, որ անունն արարվել է մեր խելամիտ նախնիների կողմից սրբազան պատվախնդրության զգացումով, խորհմաստությամբ ու ճշգրտությամբ, ապա հասկանալի կդառնա, թե իրենից ինչ մեծագույն արժեք է ներկայացնում այն: Հաճախ տեղանունը ձգում է քեզ, և դու հայտնվում ես մի դիտահարմար վայրում և ի մոտո գնում, ուսումնասիրում և մնում ապշահար, այնքան դիպուկ կարելի է միայն կրակել»:¹¹

Յուրաքանչյուր տեղանվան բացատրություն կապվում է այն գործոնների ազդեցության հետ, որոնցից էլ ծնվում են անունները, երգը, սովորույթը, ճակատագիրը: Հատկապես ուշադրության արժանի են այն բնորոշումները, որոնք ապացուցում են, որ Հայոց աշխարհը ձևվել է ոսոխի կողմից, բայց անկախության ոգին կենդանի է մնացել: Թեպետ այսօր չկան նշված շատ ու շատ վայրեր, սակայն ստեղծված գանձերը պատմում են երկրների, տեղամասերի մասին, որոնք ավերվել են թշնամուց, բայց ոգեղեն երկիրն ու ժողովուրդը ապրում է: Ապրում է նաև ոգեղեն բանահյուսությունը:

Աշխարհագրական յուրաքանչյուր տեղանուն մի բարոյախոսություն, մի ասք ու ճակատագիր է:

Դժվար է բանավիճել բացատրությունների հարցում, սակայն մի բան պարզ է, որ տեղանունները բացատրվում են նրանց հետ կապվող ավանդությունների հետ, որն անչափ ուսանելի է ու ճանաչողական: «Ձանացել ենք վերականգնել նաև անվան անադարտությունը», - գրում է ֆոլկլորագետը: «Տեղանուններից շատերը մեզ են հասել անհիշելի ժամանակներից, բնականաբար, նրանց անցած երկար ճանապարհին փորձությունների են ենթարկվել, խնդրաշարժվել, աղավաղվել ոչ միայն տիրապետող օտարների կողմից, այլև ձևախնդրվել են մեր ժողովրդական լեզվի հարափոփոխ օրինաչափություններով», - գրում է նա¹²:

Ահա այդ օրինաչափությունների բացահայտումով է Լ. Հարությունյանը վերծանում տեղանունը՝ քաջ գիտակցելով, որ բանահյուսությունը սերտորեն կապված է լեզվաբանության այնպիսի բաժինների հետ, ինչպիսիք են ստուգաբանությունը, իմաստաբանությունը, բարբառագիտությունը: Հետազոտման ընթացքում Լ. Հարությունյանը շատ անգամ է այս կամ այն բառի բացատրությամբ բացահայտում երկի գաղափարական կարևոր կողմերը: Առանց իմաստաբանության հազիվ թե հետաքրքիր դարերի փոշուց վեր հանված իրողությունը: Լ. Հարությունյանի մեծագույն զենքն է թե՛ ստուգաբանությունը, թե՛ հայրենի բազմաշերտ բարբառի իմացությունը: Լ. Հարությունյանը թե՛ լավ ֆոլկլորագետ է, թե՛ լավ լեզվաբան: Գուցե թե վերջինիս նպատակ է նաև նրա մանկավարժական երկարամյա գործունեությունը, որովհետև բացատրությունները մանկավարժորեն պարզ ու հասկանալի են, նա միայն չի սովորեցնում, այլև «հալում-լցնում է» ականջները:

Բանասերի հմտությամբ են ստուգաբանված բարդությունները, բառադարձվածքային կազմությունները՝ հաճախ տրվելով նաև տեղանվան հիմնական ու փոխաբերական իմաստները: Հնարավոր է, որ կան վիճելի երևույթներ, բայց ներկայացնելն այնպես ճշմարտապատում է, որ համոզում է ընթերցողին, քանի որ «Տեղանունն է հողը, սարը, ձորը, բնակավայրը դարձնում հայրենիք: Տեղանունը հողին դաշված մեր հիշողությունն է»:

Ժողովրդական բանահյուսությունը, ազգագրությունը կապված են ժողովրդի պատմության հետ: Հայոց հնամենի պատմության գիտակ է նաև Լևոն Հարությունյանը: Արցախի պատմության յուրաքանչյուր ժամանակահատված հետաքրքրում է նրան, ու պատմական տվյալները բազմիցս ստուգվում ու ապացուցվում են նրա կողմից:

Ավանդական ու ավանդապաշտ է Արցախի ժողովրդական բանահյուսությունը: Ավանդապաշտ է նաև հեղինակը՝ իր ժողովրդի պես, այլապես չէր գրի:

- Որքան բարի ես, արամեն ժողովուրդ, լավ մարդու և բնության հանդեպ, այնքան անողորմ եղիր, երբ թշնամիդ ջուրդ է պղտորում:

Կամ «Չկա ավելի մեծ կատարելություն բնության մեջ, քան բարի մարդն է: Բարի եղիր»:

Կամ «Թամահը պեռն ա ըշխարքն սրտն յրա: Աստված մեր թմահան կտրե՛ սերության յրա տնի»:

Կամ «Թշնամիդ վեր վեննը առաջ ա տնում, տու երկու հետ առաջ տիր, թա չէ՛ էն մին վեննը կլխետ ա տնական» և այլն:

(Հետևենք քաղաքագետ և արդարամիտ ժողովրդի խրատատու բանքին, էջ 18):

Գրքում գետնելված են պատմություններ, որոնք բացահայտում են ընտանիքի ամրությունը, սերը, արմատներին կառչած լինելու խրոխտ ուժը: հետաքրքիր ու անմոռաց են Հարությունյանի հետ կապված հուշերը («Ճուկվե հարթնը», «Որ ուտում էիր, այնպես», «Գողերը պատժվեցին», «Երգվիր, որ գողություն չես անելու», «Սիրով ապրեցեք», «Մողանա կարոտը»):

Բազմաթիվ են Հարությունյանի պատմական դասերը, որ պատգամ են սերունդներին («Ձան ասելու, ջան լսելու եղանակը երբեք չի անցնում», «Չինեին «ախպերն» ու «ջանը», մենք ցորենի շեղջեր չէինք ունենա», «Չորան բոստանն ա չորանում, չորան Մաստանը» (կովի անունը):

Հետաքրքիր է «Լորիտիկներ ուսուցչին» վերնագիրը, որը մարդու և բնության կապի և ներդաշնակության մի փայլուն օրինակ է: Այստեղ հեղինակն առաջարկում է կենսաբանության ուսուցիչներին մի իմաստուն հարցարան, որը և՛ աշխատանքային, և՛ գեղագիտական դաստիարակության վկայագիր է: «Բնությունը հեքիաթ է: Նրա հերոսներից մեկը դարձնենք նաև արդի դարոցում սովորող երեխային», - ահա Լ. Հարությունյանի ցանկությունը. ավանդություններով սնել մանկանը, նրա մեջ ներարկել պապենական սովորույթի, հրաշք գործելակերպի ուժը, բնության խորախորհուրդ գաղտնիքները, որոնք չպետք է մոռացվեն:

Գրքում հետաքրքիր հյուսվածք է «Լրախճանք և խրախճանականներ» ակնարկը, որ բացատրվում է դրանց զարգացման պրոցեսը: «Դրանք ընդգրկում և բազմաբնույթ էին և աչքի էին

ընկնում խոսքարվեստային կատարելությամբ, քանզի փնտրելն ու գտնելը, ստեղծագործելն ու հնարամտելը, բարձրաթիչը երևակայության մեջ թևածելը դարձել էին մարդու էության անկապտելի բաղադրամասը, շաղախվել արյանը, վերածվել առօրյայի, ձևավորել ճկուն մտածողություն: Լ. Հարությունյանը համոզված է, որ «արմատական այս իրողությունն էլ դարձավ այն շողարձակ անկյունաքարը հայ ստեղծագործ ոգու համար, որ դարեր շարունակ եղել է ու է՝ նրա առաջնիչ ուժը («հայ ըս՝ բանաստեղծ ըս, հայ ըս՝ պար կյվող ըս», հայ ըս՝ նկարիչ ըս, հայ ըս՝ ոսկերիչ ըս, հայ ըս՝ ամեն հինչ ըս»): Նա բացատրում է հանգալսադների, գլուխկոտրուկների, խնդրալսադների, արագ հաշվումների, ոչ մի սահման չճանաչող զվարճաբանությունների, նմանակումների, հնարամտելու, շուտասելուկների դերը: «Եթե ի մի գումարենք աշխարհի ժողովուրդների շուտասելուկային ողջ հարստությունը, ապա նրանում իր դասական հանճարեղ կեցվածքով ուրույն տեղ կունենար «Ակուփ ապեր» շուտասելուկը»,- գրում է նա:

Հիրավի, շուտասելուկը որքան գրավիչ է իր շուտասելուկային հնարավորություններով, այնքան էլ առինքնող է իր սեղմ ու սահուն ռոմ, ռիթմով ու երաժշտականությամբ: Լեզվաշինարար մեր ժողովուրդը խուփրկապե, կփրկապե, տփրկապե բարդությունները ստեղծել է շուտասելուկի պահանջները բավարարելու հաշվառումով: Լսողը սիրով է համակվում նաև խոփ, կեփ, տեփ կենցաղային բազմաշխատ գործիքների նկատմամբ:

Հնաաքրքիր բացատրություն ունի «հանելուկ» բառը: «Արցալսի բարբառում այն ավանդվել է «հնելիք» տեսքով (մեկնաբանելիք, քննելիք, բացահայտելիք): Արցալսի բարբառում հանելուկը, շուտասելուկը զվարճալիքը կոչվում էին պրնզլ: «Պրնզլ» բառը բարբառում ունի որոշ առումով բացասական իմաստ (ոչ լուրջ բան, պատում): Լ. Հարությունյանը բացահայտում է, որ «նման իմաստ «պրնզլ» բառն ստացել է ժողովրդական զվարճահարույց բանքի նկատմամբ քրիստոնեական գաղափարախոսության ունեցած վերաբերմունքով: Ըստ քրիստոնեական մոտեցման՝ պնզլաբանելը հեթանոսությունից ժառանգված պիղծ սովորությունն է¹³: (Տեսականորեն հնաաքրքիր, հիմնավորված մեկնաբանություն ունի «Քաթ, քաթ» բանահյուսական չափածո շարքը, որ «բանասերներից ոմանց թվացել է որպես հեթադների նախաբան»: Լ. Հարությունյանը պարզում է, որ դա հանելուկների շարք է, ու նա մեկ առ մեկ վերլուծում է որպես հանելուկ և շատ ճիշտ հիմնավորում ունի, որովհետև որպես հեթադ իմաստագուրկ շարվածք է, որը դժվար թե ստեղծվեր ժողովրդի կողմից:

Գրքում այբբենական հաջորդականությամբ տրված են արցալսյան հանելուկների, դարձվածքների շարքեր, բժշկական խորհուրդներ, զանազան բույսերի ու ծառերի օգտակար հատկությունների մասին տեղեկություններ, առողջապահական խորհուրդներ, վարի, ցանքսի, գինու, խաղողենու վերաբերյալ օգտակար նյութեր: Իսկ «Լեզուն ավանդապահ է» բաժնում Լ. Հարությունյանը գրում է.

«Լսորանալով Արցալսի ժողովրդական բանահյուսության մեջ՝ ես ավելի քան համոզվեցի, որ բանահյուսությունը առաջին հերթին լեզու է, և այն չի կարող լիարժեքությամբ ընկալվել առանց ստուգաբանելու, հասկանալու բառը, դարձվածքը, առածն ու ասացվածքը. բառը, նաև առածը, ասացվածքը, դարձվածքը պատմություն է, մտածողության արգասիք, մշակույթի մակարդակ»¹⁴:

Բացատրական, ստուգաբանական, ազգագրական բառարանը ներկայացնում է մեծ քանակությամբ բառեր: Հեղինակի վկայությամբ՝ բառարանային աշխատանքն ավարտված չէ, այն դեռևս քարտարանային վիճակում է, սակայն եղած էջերը վկայում են բանասեր-բանահավաքի արպտուն մտքի, անսպառ եռանդի մասին:

Լ. Հարությունյանի բոլոր գրքերում էլ զգացվում է հեղինակի պատկառանքը բանախոսների, բանահավաքների հանդեպ:

Այս գրքում էլ զետեղված են մերօրյա բանախոսների ստեղծածներից («Զվարճալսու Ռուբեն Իշխանյանի հավաքածուից», համագյուղացիներ Գրիշա Խաչատրյանի, Լեռնիկ Գրիգորյանի պատումներից):

Բազմաթև ու բազմաշերտ է Լ. Հարությունյանի «Նշխարների» աշխարհը, ասել է թե՛ իր աշխարհը: Նյութերը շատ են, խորախորհուրդ, ուսումնասիրության կարոտ: Դեռ կլստալի Լ. Հարությունյանի «Նշխարների» մնայուն արժեքի, արցալսյան անընկճելի ոգու, նյութերի խորության, իմաստության մասին: Նորից ու նորից համոզվում ենք. «Ինչ էլ որ պոկես թռչող ժամանակի բերանից, թեկուզ մի փետուրիկ, չնչին թվացող մի աղվամազ, լինելու է միակ ու թանկագին, մեր ազգ ու տակի հիշատակի պես սիրելի» (Լ. Հարությունյան): Նորից համոզվում ենք՝ Լ. Հարությունյանի անելիքի համար մի կյանքը շա՛տ քիչ է:

Լ. Հարությունյանի չորրորդ գիրքը հայ բանագիտության մեջ հաստատում է հեղինակի դերը՝ հայտնագործել, ուսումնասիրել, քննել մասունքներ, որոնք դարեդար կխոսեն հայ մարդու կյանքի, կենցաղի, հավատալիքների, պատմության, նրա լինելության խորհրդի մասին:

Իսկ արցախցին գիտի իր բառ ու բանի արժեքը և իր սովորության ուժով միշտ էլ կօրհնի նրա ստեղծողին՝ ասելով՝ «Պերանդ քաղցր կենա: Ներակ տնսնամ աստուծ հուր-հավիտենական կյանք տա քեզ, աշխարքս քզանավ լիանա...»: Արցախյան բանարվեստը կլիանա Լ. Հարությունյանի «Նշխարներով»...

«Հուսով եմ, որ պետք կլինեմ իմ ժողովրդին մահվանց հետո էլ», - գրում է հեղինակը (Գրառումներ ծոցատնտրից):

Վերստին հիշենք Մեծն Թումանյանին՝

«Գործն է անմահ... լավ իմացեր,
Որ խոսվում է դարեդար,
Երենկ նրան, ով իր գործով
Կապրի անվերջ, անդադար:

Ծանոթագրություններ

1. Լ.Հարությունյան, Գրառումներ ծոցատնտրից, Ստեփ., 2004, էջ 63:
2. Նույն տեղում, էջ 7:
3. Լ.Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, Ստեփ., «Դիզակ պլյուս», 2009, էջ 4-5:
4. Նույն տեղում, էջ 7:
5. Գր.Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1987, էջ 8:
6. Մ.Գորկի, գրական-հրապարակախոսական ժողովածուներ, 1949, էջ 292:
7. Նշխարներ Արցախի բանահյուսության, Ստեփ. «Դիզակ պլյուս», 2009, էջ 7, 8:
8. Նույն տեղում, էջ 15:
9. Նույն տեղում, էջ 22:
10. Նույն տեղում, էջ 23:
11. Նույն տեղում, էջ 31:
12. Նույն տեղում, էջ 31:
13. Նույն տեղում, էջ 107:
14. Նույն տեղում, էջ 208:

Резюме

Своеобразной сокровищницей – энциклопедией является 4 книга Л. Арутюняна “Реликвия Арцахского фольклора”, который является этнографическим, фольклорным, историческим, языковедческим ценным сборником, отражающим вековую мудрость арцахского народа.

Каждая часть сборника урок мудрости, мечта о национальной солидарности, стремление жить мирно и свободно.

Четвертая книга Л.Арутюняна утверждает роль автора в армянском фольклоре – открыть, исследовать этнографические особенности армянского народа, его быт, веру и историю.